ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **20/մայիսի/2021 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...6...անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալներ Ս. Մարգարյանը և Ա. Խաչատրյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյանը, գլխավոր մասնագետներ Ա. Գառնիկյանը և Ս. Վարդանյանը, Կարմրաշեն գյուղի վարչական ղեկավար Ռ. Առաքելյանը:

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար՝ Վարդան Հովհաննիսյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 20-ի նիստի հետևյալ *օրակարգը*.

1.1. Ջերմուկ համայնքի 2021 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2 Ջերմուկ համայնքի 2020 թվականի հաշվապահական հաշվեկշիռը և գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 81-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.4. «Ջերմուկ համայնքի ««Զատիկ» մանկապարտեզ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» և «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 28-ի N 17-Ն ու նախկին Գնդեվազ համայնքի ավագանու 2011 թվականի մարտի 2-ի N 13 որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.5. Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.6. «Ջերմուկ համայնքի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ–ի մարզադահլիճի մի մասը վարձակալության տրամադրելուն համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.7. Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող հողամասերը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու, տարեկան վճարի չափը և պայմանները հաստատելու, Ջերմուկ համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 29-ի N 13-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.8. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Բարեկամության փողոցի N 2/6 հասցեում գտնվող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու, տարեկան վճարի գինը և պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.9. Ջերմուկ համայնքի Կարմրաշեն գյուղում գտնվող համայնքային սեփականության հողամասը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, ամսական վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.10. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 80-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.11. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող ուղղակի վարձակալության տրվող ավտոտնակների, բնակելի և ոչ բնակելի տարածքների վարձավճարների չափը սահմանելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.12. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 24-ի N 26-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.13. Դրամական հատկացում կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.14. Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից Հայաստանի համայնքներին՝ ԿՈՎԻԴ համավարակով պայմանավորված դժվարություններին դիմագրավելու նպատակով կազմակերպված դրամաշնորհային մրցույթին մասնակցելու համաձայնություն տալու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ս. Վարդանյան

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----------6---- Դեմ----0-------- Ձեռնպահ----0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի 2021 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------6---- Դեմ----------0 Ձեռնպահ----0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱՋԱՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 32-րդ ենթակետին համապատասխան

1. Հաստատել Ջերմուկ համայնքի 2020 թվականի հաշվապահական հաշվեկշիռը և գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն NN 1-4 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------5---------- *Դեմ*----0---------- *Ձեռնպահ*----1----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 81-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱՋԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 81-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշման 1-ին կետում «*676269.46*» թիվը փոխարինել «*678269.46*» թվով
   2) որոշման 1-ին կետի 1.1 ենթակետում «615353,936.9» թիվը փոխարինել «*617353,936.9*» թվով
   3) որոշմամբ հաստատված հավելվածի Հատված 1-ի 1200 և 1250 տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «186043.1» թիվը փոխարինել «185453.6» թվով, 1257Բ տողի տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «2100.4» թիվը փոխարինել «2022.7» թվով, 1257Գ տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «2333.7» թիվը փոխարինել «1821.9,» թվով, 1300 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «304271.7» թիվը փոխարինել «306861.2» թվով, 1340 և 1342 տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «6069.5» թիվը փոխարինել «9588.9» թվով, 1342Գ տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «2366.2» թիվը փոխարինել «3885.6» թվով, 1342Դ տողի 4-րդ և 5-րդ սյունակներում ,«0» թիվը փոխարինել «2000.0» թվով, 1350 տողի 4-րդ և 5-րդ տողերի «59116.2» թիվը փոխարինել «59705.7» թվով, 1351 տողի 4-րդ և 5-րդ տողերի «59101.2» թիվը փոխարինել «59690.7» թվով, 1351Ե տողերի 4-րդ և 5-րդ «2149.2» թիվը փոխարինել «2226.9» թվով , 1351Զ տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «6318.0» թիվը փոխարինել «6829.8» թվով, 1390 և 1393 տողերի 4-րդ և 5-րդ սյտնակներում «24211.8» թիվը փոխարինել «22692.4» թվով:

4) որոշմամբ հաստատված հավելվածի Հատված 2-ի 2000 տողի 6-րդ սյունակում «659969.5» թիվը փոխարինել «661969.5» թվով, 7-րդ սյունակում «615353.9» թիվը փոխարինել «617353.9» թվով, 2100 տողի 6-րդ սյունակում «178398.3» թիվը փոխարինել «176237.8» թվով, 7-րդ սյունակում «162098.3» թիվը փոխարինել «159937.8» թվով, 2100 և 2110 տողերի 6-րդ սյունակում «165928.6» թիվը փոխարինել «161568.1» թվով, 7-րդ սյունակում «149628.6» թիվը փոխարինել «145268.1» թվով, 2160 և 2161 տողերի 6-րդ և 7-րդ տողերի սյունակներում «1800.0» թիվը փոխարինել «4000.0» թվով, 3000 տողի 6-րդ և 7-րդ սյունակներում «17166.2» թիվը փոխարինել «21326.6» թվով, 3040 և 3041 տողերի 6-րդ և 7-րդ սյունակներում «4500.0» փոխարինել «6500.0» թվով, 3090 և 3091 տողերի 6-րդ և 7-րդ սյունակներում « 2366.2» թիվը փոխարինել «4526.6» թվով:

5) որոշմամբ հաստատված հավելվածի Հատված 3-ի 4000 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «659969.5» և «615353.9» թվերը համապատասխանաբար փոխարինել «661969.5» և «617353.9» թվերով, 4050 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «615353.9» թիվը փոխարինել «617353.9» թվով, 4100 և 4110 տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «148225.4» թիվը փոխարինել «150794.5» թվով, 4111 տողի 4-րդ և 5-րդ սյունակների «130879.9» թիվը փոխարինել «134549.0» թվով, 4114 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «7280.3» թիվը փոխարինել «6180.3» թվով, 4200 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «66389.1» թիվը փոխարինել «70210.4» թվով, 4210 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «35737.0» թիվը փոխարինել «35993.1» թվով, 4212 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «30330.2» թիվը փոխարինել «30590.0» թվով, 4214 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «2827.3» թիվը փոխարինել «2823.7» թվով, 4220 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «2784.0» թիվը փոխարինել «2777.0» թվով, 4221 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «1234.0» թիվը փոխարինել «1227» թվով, 4230 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «6892.8» թիվը փոխարինել «9092.8» թվով, 4238 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «250.0» թիվը փոխարինել «2450.0» թվսվ, 4251 տողի 4-րդ և 5-րդ սյտնակներում «3188.0» թիվը փոխարինել «3218.0» թվով, 4260 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «10020.9» թիվը փոխարինել «11363.1» թվով, 4261 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «1635.4» թիվը փոխարինել «1557.6» թվով, 4264 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում ,, 3997.1,, թիվը փոխարինել ,, 5170.6,, թվով, 4268 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «1716.2» թիվը փոխարինել «1962.7» թվով, 4400,4410 և 4411 տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «57951.2» թիվը փոխարինել «58540.7» թվով, 4500 և 4530 տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «231642.1» թիվը փոխարինել «226692.1» թվով, 4531 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «227970.7» թիվը փոխարինել «223020.7» թվով, 4600 և 4630 տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «14800.0» թիվը փոխարինել «14770.0» թվով, 4634 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «11500.0» թիվը փոխարինել «11470.0» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----6---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34-Ն/

Լսեցին

«ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ««ՋԱՏԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ԳՆԴԵՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 17-Ն ՈՒ ՆԱԽԿԻՆ ԳՆԴԵՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N 13 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «Նախադպրոցա–կան ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 515-Ն որոշումը՝

1. Հաստատել «Ջերմուկ համայնքի ««Ջատիկ» մանկապարտեզ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Ջերմուկ համայնքի «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 28-ի «Ջերմուկի քաղաքային համայնքի «Ջատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 17-Ն և նախկին Գնդեվազ գյուղական համայնքի ավագանու՝ «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ–ի կանոնադրության հաստատելու մասին 2011 թվականի մարտի 2-ի N 13 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------6---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 12-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» N 12-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում, 1-ին կետում և հավելվածի վերնագրում «և դրանց» բառերը փոխարինել «, չափորոշիչները և» բառերով,

2) հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----6---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36-Ն/

Լսեցին

«ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ-Ի ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ՄԻ ՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 25-ի N 12-Ա որոշմամբ հաստատված «Ջերմուկ համայնքի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Տալ համաձայնություն «Ջերմուկ համայնքի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի՝ Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի N 16/1 հասցեում գտնվող մարզադահլիճը (այսուհետ՝ անշարժ գույք) 1 (մեկ) տարի ժամկետով Հայաստանի խառը մենամարտերի ֆեդերացիային վարձակալության տրամադրելուն՝ համայնքի տարածքում մարզական գործունեություն ծավալելու և մարզչական դասաժամեր անցկացնելու նպատակով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի վարձավճարի չափ սահմանել՝ ամսական 35.000 (երեսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Իրավունք վերապահել Ջերմուկի համայնքի ղեկավարին Հայաստանի խառը մենամարտերի ֆեդերացիայի հետ կնքելու տարածքի վարձակալության պայմանագիր:

4. Սահմանել, որ վարձակալած տարածքի օգտագործման պայմաններն ու պահանջները կարգավորվում են վարձակալության պայմանագրով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----6---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱՐԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի N 13-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ և 48[1] հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ հաստատված Կարգի 46.2 կետի «ա» ենթակետը՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի N 4/4 և Ազատամարտիկների փողոցի N 17/1 հասցեներում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 6 քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակությամբ ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասերը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման տարեկան վճարի գինը սահմանել՝ Մյասնիկյան փողոցի N 4/4 հասցեի հողամասի համար՝ 60 000 (վաթսուն հազար) դրամ և Ազատամարտիկների փողոցի N 17/1 հասցեի հողամասի համար՝ 45 000 (քառասունհինգ հազար) դրամ, ժամկետը՝ 2025 թվականի հուլիսի 1-ը, նպատակը՝ մամուլի կրպակ տեղադրելու համար:

3. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 29-ի «Ջերմուկի համայնքի սեփականությունը համարվող Մյասնիկյան փողոցի N 4/4 հասցեում գտնվող 6 քմ մակերեսով հողամասը վարձակալման տրամադրելու համաձայնություն տալու, վարձավճարի մեկնարկային գինը և վարձակալման պայմանները հաստատելու մասին» N 13-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------6---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 38-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 2/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48[1]-րդ և 76-րդ հոդվածներին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Բարեկամության փողոցի N 2/6 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, 10-002-0018-0061 կադաստրային ծածկագրով 0,1081 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը (գործառնական նշանակությունը՝ ընդհանուր օգտագործման) մրցութային եղանակով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման տարեկան վճարի մեկնարկային գինը սահմանել 60 000 (վաթսուն հազար) դրամ, ժամկետը՝ 99 (իննսունիններ) տարի, նպատակը՝ հանգստի գոտի ստեղծելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----6---- *Դեմ*----0---- *Չեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 39-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՄՐԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Կարմրաշեն գյուղում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 2,60311 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-027-0105-0001) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, ամսական վարձավճարի մեկնարկային չափը՝ 5 000 (հինգ հազար) դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 10 (տաս) տարի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------6---------- Դեմ----------0---------- Ձեռնպահ----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ի N 80-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասին և 34-րդ հոդվածին համապատասխան՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի ««2021 թվականի համար Ջերմուկ համայնքի և համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» N 80-Ն որոշման 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝ «8–րդ» թիվը փոխարինել «10-րդ» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2021 թվականի ապրիլի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Կողմ----------5---------- Դեմ----------0---------- Ձեռնպահ----------1----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 41-Ն/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԻ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի « Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման հավելվածի 35-րդ կետի «զ» ենթակետի՝

1.Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող, ուղղակի վարձակալության տրվող բնակելի տարածքների ամսական վարձավճարի չափը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 6 (վեց) դրամ:

2. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող, ուղղակի վարձակալության տրվող ոչ բնակելի տարածքների, այդ թվում՝ տնտեսական և օժանդակ շինությունների, վարձավճարների ամսական չափը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 50 (հիսուն) դրամ:

3. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող, ուղղակի վարձակալության տրվող

ավտոտնակների վարձավճարների տարեկան չափը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 400 (չորս հարյուր) դրամ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----5---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----1----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 26-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համապատասխան, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները, սահմանների կոորդինատներն ու տարածագնահատման գոտիականության քարտեզները սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն, 1994 թվականի սեպտեմբերի 28-ի N 462 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և 2002 թվականի հուլիսի 25-ի N 1101-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններ կատարելու մասին» N 1023-Ն որոշումը՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 24-ի «Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին» N 26-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման 1-ին կետի աղյուսակի նախավերջին տողում «500 000» թիվը փոխարինել «1 250 000» թվով, վերջին տողում «400 000» թիվը փոխարինել «985 000» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----5---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----1----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43-Ա/

Լսեցին

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորություններ և դրանց իրականացման կարգը

սահմանելու մասին» N 12-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետով և ի ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկի համայնքի 2021 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից ֆինանսական օգնություն տրամադրել համայնքի հետևյալ բնակիչներին՝

Անտոնյան Սուսաննա՝ 100 000 (հարյուր հազար) դրամ

Խաչատրյան Մարինե՝ 100 000 (հարյուր հազար) դրամ

Գրիգորյան Սարգիս՝ 150 000 (հարյուր հիսուն հազար) դրամ

Ստեփանյան Սամվել՝ 150 000 (հարյուր հիսուն հազար) դրամ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----6---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44-Ա/

Լսեցին

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ՝ ԿՈՎԻԴ ՀԱՄԱՎԱՐԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴԻՄԱԳՐԱՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքին մասնակցելու Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից Հայաստանի համայնքներին՝ ԿՈՎԻԴ համավարակով պայմանավորված դժվարություններին դիմագրավելու համար հայտարարված դրամաշնորհային մրցույթին մասնակցելու և այդ նպատակով Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից համայնքներում տնտեսական զարգացմանն ուղղված փոքր և միջին ծրագրերը իրականացնելու նպատակով կազմակերպված դրամաշնորհային մրցույթին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----6---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	ստորագրություն
Բաբայան Կավկազ Զավենի բացակա	
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի բացակա	
Բագրատյան Արտակ Կառլենի	
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	
Գևորգյան Արտավազդ Վարազդատի բացակա	
Գրիգորյան Արմեն Գրիշայի բացակա	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Սարգսյան Հասմիկ Ժորայի	
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	

Ջերմուկ համայնքի ղեկավար՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը